Հավելված N 13
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղարի
2023 թվականի հունիսի 14-ի
N ԳՔՀ / 364 - Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԱՐՑԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության (այսուհետ՝ Վարչություն) պետ (ծածկագիրը՝ 93-30.2-Ղ4-1)

1.2. Ենթակա և հաշվետու է

Վարչության պետն անմիջական ենթակա և հաշվետու է Մարզպետին:

1.3. Ենթակա և հաշվետու պաշտոններ

Վարչության պետին անմիջական ենթակա և հաշվետու են Վարչության աշխատողները:

1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում Վարչության գլխավոր մասնագետներից մեկը:

1.5. Աշխատավայրը
Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, Աբովյան 71

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. ապահովում է առողջապահության բնագավառում պետական առողջապահական ծրագրերի իրագործումը.
2. ապահովում է մարզային ենթակայության պետական առողջապահական

հաստատությունների աշխատանքի կազմակերպումը

3. ապահովում է օրենսդրությամբ սահմանված կարգով բնակչության անվճար բուժօգնության իրականացման վերահսկությունը.
4. ապահովում է մարզի տարածքում հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների կազմակերպումը և իրականացնումը.
5. ապահովում է վարակիչ և զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների ու թունավորումների կանխարգելման նպատակով սանիտարահիգիենիկ միջոցառումների կազմակերպումը.
6. ապահովում է առողջապահության բնագավառում պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության մարմիններին՝ բնակավայրերի ջրամատակարարման աղբյուրների, բնակելի շենքերի, դպրոցների և այլ օբյեկտների սանիտարական վիճակի նկատմամբ հսկողություն իրականացնելիս աջակցության տրամադրումը.
7. ապահովում է մարզի բնակչության առողջական վիճակի ուսումնասիրության, առողջապահության զարգացման հիմնական ուղղությունների մշակման աշխատանքները և միջոցներ է ձեռնարկում հիվանդությունների, հաշմանդամության ու մահացության նվազեցման ուղղությամբ, ինչպես նաև մարդկանց կյանքի տևողության ավելացմանն ուղղված հետագա ծրագրերի իրականացման կազմակերպումը.
8. ապահովում է մարզի առողջապահական հիմնարկներին մեթոդական և գործնական օգնության ցուցաբերումը.
9. ապահովում է պետության կողմից երաշխավորված անվճար բուժօգնության և սպասարկման շրջանակներում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի իրականացման աշխատանքների կազմակերպումը.
10. ապահովում է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական ծրագրի իրականացման աշխատանքների կազմակերպումը.
11. ապահովում է մարզի բուժհաստատություններում դեղերի և բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման, բաշխման աշխատանքներին

մասնակցություն.

12. ապահովում է մարզային ենթակայության ներքո գտնվող բուժհաստատությունների կադրերի վերապատրաստման ու վերարտակավորման աշխատանքների կազմակերպման աջակցումը.
13. ապահովում է մարզային ենթակայության առևտրային կազմակերպություններից ստացված մշտադիտարկման տվյալների ուսումնասիրության և վերլուծության աշխատանքների կազմակերպումը.
14. ապահովում է սոցիալական ապահովության բնագավառում գործազուրկների հաշվառման և բնակչության զբաղվածության հետ կապված խնդիրների լուծմանը աջակցություն, մասնավորապես՝ աջակցում է «Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովման» և «Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրման» ծրագրերի իրականացմանը.
15. ապահովում է սոցիալական ապահովության բնագավառում սոցիալական ապահովության խնդիրներ իրականացնող հասարակական կազմակերպությունների գործունեության աջակցումը.
16. ապահովում է սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպություններին՝ մարզում սոցիալական աջակցության ծրագիր իրականացնելիս աջակցումը.
17. ապահովում է բնակարանի կարիք ունեցող փախստական ընտանիքների հաշվառման և նշված ընտանիքների բնակարանային ապահովության պետական ծրագրերի իրականացման աշխատանքներին օրենսդրությանը համապատասխան օժանդակումը և կազմակերպումը.
18. ապահովում է զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների ընտանիքներին՝ անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու նպատակով աջակցումը.

19. ապահովում է հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի նիստերի նյութերի սահմանված կարգով նախապատրաստումը և արձանագրությունների կազմումը.
20. ապահովում է մարզում հաշմանդամության իրավիճակի վերաբերյալ տարեկան հաշվետվությունների մշակման աշխատանքներին մասնակցությունը.
21. ապահովում է մարզի հաշմանդամների պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաներով ապահովման աշխատանքներ կազմակերպումը.
22. ապահովում է հաշմանդամների և տարեցների հիմնահարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ համագործակցումը.
23. ապահովում է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և շահերի պաշտպանության ընթացքում ծագած խնդիրների քննարկմանը համապատասխան պետական կառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների, տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներին մասնակից դարձնելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը.
24. ապահովում է Մարզում ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանությանն ուղղված քաղաքականության իրականացումը,
25. ապահովում է ընտանիքների, կանանց և երեխաների պաշտպանությանն ուղղված ծրագրերի մշակումը և իրականացումը.
26. ապահովում է մարզում գենդերային հիմնահարցերի ուսումնասիրումը, դրանց լուծմանն ուղղված ծրագրերի մշակումը.
27. ապահովում է գենդերային քաղաքականության համակարգման լիազոր մարմնին ներկայացնելու նպատակով գենդերային հիմնահարցերի լուծմանն ուղղված աշխատանքների մասին տարեկան հաշվետվության ներկայացումը ոլորտը համակարգող Մարզպետի տեղակալին և առաջարկությունների ներկայացումը՝ հաջորդ տարվա իրականացվելիք միջոցառումների մասին.
28. ապահովում է մարզում կանանց և երեխաների առքուվաճառքի (թրաֆիկինգ)

հիմնահարցերի ուսումնասիրումը.

29. ապահովում է մարզում կանանց և երեխաների առքուվաճառքի (թրաֆիկինգ) հայտնաբերված զոհերի վերաբերյալ տեղեկատվությունը, ոլորտը համակարգող Մարզպետի տեղակալի միջոցով, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն (այսուհետ՝ Նախարարություն) և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության մարզային վարչությանը (այսուհետ՝ Ոստիկանություն) տրամադրումը.

30. ապահովում է պետական լիազոր մարմնի միջոցով մարզում կանանց և երեխաների առքուվաճառքի (թրաֆիկինգ) հայտնաբերված զոհերի ուղղորդման իրականացնումը համապատասխան գերատեսչություններ և կառույցներ.

31. ապահովում է ոստիկանության համապատասխան ծառայությունների հետ՝ համատեղ աշխատանքների իրականացումը իրենց երեխաների վրա բացասական ներգործություն ունեցող, հակասոցիալական վարքագիծ դրսևորող ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ.

32. ապահովում է կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների և նրանց ընտանիքների կարգավիճակի ուսումնասիրումը և նրանց կարիքների գնահատման իրականացումը.

33. ապահովում է կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների ավտոմատացված <<Մանուկ>> տեղեկատվական համակարգի վարումը.

34. ապահովում է երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության բոլոր անհրաժեշտ միջոցների ձեռնարկումը, երեխայի լավագույն շահը պաշտպանելու նպատակով.

35. ապահովում է առկա տարաձայնությունների լուծումը՝ ծնողական իրավունքի իրականացման ընթացքում ծնողների կողմից փոխադարձ համաձայնության բացակայության դեպքերում՝ հաշվի առնելով երեխայի շահերը.

36. ապահովում է մասնակցություն խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների այն նիստերին, որտեղ քննարկվում են երեխայի հետ կապված

հատուկ դեպքերը, ինչպես նաև դատական այն նիստերին, որտեղ քննարկվում են երեխայի իրավունքներն ու շահերը.

37. ապահովում է հանրակրթությունից դուրս մնացած, այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթական իրավունքի պաշտպանության իրականացնումը.
38. ապահովում է ոստիկանության համապատասխան ծառայությունների հետ համատեղ մուրացիկ, թափառաշրջիկ, իրավախախտ, հանցագործություն կատարած անչափահասների կողմնորոշման խնդիրների քննարկումը, անհրաժեշտության դեպքում համապատասխան հաստատություններ ուղղորդումը, անչափահասների իրավունքների ու շահերի պաշտպանումը.
39. ապահովում է երեխայի կյանքի պայմանների ուսումնասիրության իրականացումը, կարիքների գնահատումը և եզրակացության տրամադրումը՝ երեխային մանկատուն տեղավորելու մասին.
40. ապահովում է որդեգրել ցանկացող Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և խնամատար ծնող դառնալու ցանկություն հայտնած անձանց հաշվառման ու եզրակացությունների տրամադրման իրականացումը.
41. ապահովում է մանկատանը տեղավորված երեխային՝ ծնողներին վերադարձնելու դեպքում, ծնողների դիմումի և կատարված ուսումնասիրության ակտի հիման վրա եզրակացության տրամադրումը՝ երեխային ընտանիք վերադարձնելու վերաբերյալ,
42. ապահովում է երեխայի կյանքի պայմանների ուսումնասիրության իրականացումը, կարիքների գնահատումը և եզրակացության տրամադրումը՝ երեխային խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունում տեղավորելու մասին.
43. ապահովում է երեխաների ծննդյան վկայականների ձեռք բերման աջակցումը՝ դրանց բացակայության դեպքերում.
44. ապահովում է Մարզպետին երեխայի իրավունքների պաշտպանության գործունեության մասին տարեկան հաշվետվության ներկայացումը.

45. ապահովում է Երեխաների պաշտպանության ազգային հանձնաժողովին ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտի գործունեության մասին տարեկան հաշվետվության ներկայացումը.
46. ապահովում է Աշխատակազմ հասցեագրված քաղաքացիների դիմումների, բողոքներ քննարկում և դրանց ընթացքը օրենքով սահմանված կարգով լուծում տալը:

Իրավունքները՝

1. վերահսկել մարզային ենթակայության առողջապահական կազմակերպությունների աշխատանքը.
2. ծանոթանալ առողջապահության որլորտի առաջնային խնդիրների բացահայտման, պետական աջակցության ծրագրերի մշակման և իրականացման գործընթացներին.
3. տրամադրել դրական կամ բացասական եզրակացություն՝ որդեգրել ցանկացող անձին և որդեգրման ենթակա երեխային, խնամատար ծնողի թեկնածու դառնալ ցանկացող քաղաքացուն, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում երեխային տեղավորելու, հաստատությունում բնակվող (խնամվող) երեխայի կենսաբանական ընտանիք վերադարձի վերաբերյալ.
4. համապատասխան մարմիններից պահանջել սոցիալական, իրավական պաշտպանվածության վերաբերյալ տեղեկատվություն, ստանալ լրացուցիչ փաստաթղթեր, կարծիքներ և առաջարկություններ.
5. տարածքային մակարդակում սոցիալական համագործակցության համակարգող խորհուրդներից պահանջել և ստանալ հաշվետվություններ իրականացված աշխատանքների վերաբերյալ.
6. պաշտոնատար անձանցից և այլ քաղաքացիներից ստացված, երեխայի կյանքի և առողջությանը սպառնալու, նրա իրավունքների և շահերի խախտումների վերաբերյալ տեղեկատվության դեպքերում՝ հետևել առկա տարաձայնությունների լուծման աշխատանքներին՝ ծնողական իրավունքի իրականացման ընթացքում ծնողների կողմից փոխադարձ համաձայնության բացակայության դեպքերում՝ հաշվի առնելով երեխայի շահերը.
7. աջակցել երեխայի ծննդյան վկայականի ձեռքբերմանը՝ դրա բացակայության դեպքում.
8. հետևել և աջակցել հանրակրթությունից դուրս մնացած, այդ թվում՝

կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթական իրավունքի պաշտպանությանը.

9. իրականացնել առանց ծնողական խնամքի մնացած երեխայի և առանց ծնողական խնամքի մնացած երեխայի թվին պատկանող անձանց իրավունքների պաշտպանություն, տարածքային հաշվառում, հետևել խնամակալության և հոգաբարձության մարմնի հետ փոխհամագործակցությանը.
10. Ոստիկանության համապատասխան ծառայությունների հետ համատեղ աշխատանքներ իրականացնել իրենց երեխաների վրա բացասական ներգործություն ունեցող, հակասոցիալական վարքագիծ դրսևորող ծնողների (կամ նրանց օրինական ներկայացուցիչների) հետ.
11. ոստիկանության համապատասխան ծառայությունների հետ համատեղ կատարել Մարզում անչափահասների իրավունքների ու շահերի պաշտպանություն, աջակցել իրավախախտ, հանցագործություն կատարած անչափահասների հետ տարվող քննչական գործողություններին, մասնակցել դատական այն նիստերին, որտեղ քննարկվում են երեխայի իրավունքներն ու շահերը.
12. աջակցել սոցիալական ապահովության խնդիրներ իրականացնող, հաշմանդամների և տարեցների հիմնահարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների գործունեությանը, հետևել համագործակցությանը մարզպետի աշխատակազմի հետ.
13. իրավական և մասնագիտական հսկողության շրջանակում իրականացնել հսկողություն Մարզի տեղական ինքնակառավարման մարմիններում, օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան առաջարկություններ և անհրաժեշտ տեղեկատվություն ներկայացնել Մարզպետին.
14. հրավիրել խորհրդակցություններ՝ դրանց մասնակից դարձնելով համապատասխան մարմինների պաշտոնատար անձանց, մասնագետների, փորձագետների.
15. ըստ անհրաժեշտության ներկայացնել համապատասխան զեկուցումներ՝ Վարչության կողմից սպասարկվող ոլորտներին առնչվող համապատասխան մարմիններում կատարվող, ինչպես նաև պաշտոնատար անձանց կողմից կատարվող աշխատանքների վիճակի մասին.
16. ներկայացնել առաջարկություններ՝ Վարչության աշխատանքներին մասնագետներ, փորձագետներ, գիտական հաստատությունների ներկայացուցիչներ ներգրավելու, ինչպես նաև աշխատանքային խմբեր կազմավորելու համար:

Պարտականությունները՝

1. ստուգել Մարզի սոցիալական աջակցության, պետական առողջապահական ծրագրերի իրագործման ընթացակարգը, ինչպես նաև աջակցել մարզպետի աշխատակազմի ենթակայության սոցիալական ապահովության և առողջապահական խնդիրներ իրականացնող հասարակական կազմակերպությունների աշխատանքներին.
2. ուսումնասիրել և ամփոփել մարզի սոցիալական վիճակի վերաբերյալ կատարված վերլուծությունները, համապատասխան մարմինների տարբեր ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ մասնակցել մասնագիտական քննարկումների.
3. քննարկել և վերլուծել մարզպետի աշխատակազմի ենթակայության առողջապահական կազմակերպությունների առևտրային բանկերի հանդեպ առկա և ձեռքբերվող դեբիտորական և կրեդիտորական պարտավորությունների պատճառները և ներկայացնել խնդիրների լուծման տարբերակներ.
4. ստուգել վճարովի սկզբունքով տրամադրվող բժշկական ծառայությունների սակագների գնագոյացման վերլուծությունը և հիմնավորվածությունը.
5. վերահսկել սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված բնակչության անվճար բուժօգնության իրականացման աշխատանքները.
6. ուսումնասիրել համայնքներից հավաքագրած «Վարձատրվող հասարակական աշխատանքների» և «Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրման ծրագրերի» վերաբերյալ տեղեկատվությունը և ներկայացնել համապատասխան շահագրգիռ մարմիններին.
7. ուսումնասիրել և ներկայացնել առաջարկություններ համապատասխան պետական կառավարման մարմիններին, հասարակական կազմակերպություններին, տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներին հաշմանդամություն ունեցող անձանց և տարեցների իրավունքների և շահերի պաշտպանության ընթացքում ծագած խնդիրների վերաբերյալ.
8. աջակցել զինված ուժերի զինծառայողներին, պահեստ արձակված անձանց, նրանց ընտանիքների անդամներին՝ սոցիալական, իրավական պաշտպանվածության ուղղությամբ տարվող աշխատանքներում.
9. վերահսկել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի անհատական սոցիալական ծրագրի մշակման աշխատանքները, դրանով նախատեսված միջոցառումների իրականացումը, կազմակերպել խմբային (բազմամասնագիտական) քննարկումներ.
10. Հետևել բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն երեխայի տեղավորելու, հաստատությունում բնակվող (խնամվող) երեխայի կենսաբանական ընտանիք վերադարձի գործընթացներին՝ ծնողների (ծնողի) կամ ընտանիքի

չափահաս այլ անդամի գրավոր դիմումի համաձայն.

11. ուսումնասիրել Մարզում կանանց և երեխաների առուվաճառքի (թրաֆիքինգ) հիմնահարցերը, մշակել զոհերի սոցիալական վերականգնմանն ուղղված ծրագրեր, և նախարարության միջոցով կատարել Մարզում հայտնաբերված կանանց և երեխաների առուվաճառքի (թրաֆիքինգ) զոհերի ուղղորդումը համապատասխան գերատեսչություններ և կառույցներ.
12. ամփոփել առողջապահության ոլորտին առնչվող հարցերի վերաբերյալ Վարչության լիազորությունների շրջանակներում նախապատրաստված առաջարկությունները, տեղեկանքները, հաշվետվությունները, միջնորդագրերը, զեկուցագրերը և այլ փաստաթղթերը.
13. կատարել քաղաքացիների ընդունելություն, Մարզպետի մոտ կայանալիք ամենամսյա ընդունելության համար ուսումնասիրել քաղաքացիների դիմումները, բողոքները, անհրաժեշտության դեպքում կատարել տնային այցելություններ.
14. ստուգել բուժհաստատությունների գործունեության ծավալների համապատասխանելիությունը առողջապահության նախարարության տրված չափորոշիչներին, վերահսկել բժշկական հաստատություններում դեղերի և բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման, բաշխման, պահպանման և հաշվառման, բնակչության սոցիալական անապահով և առանձին /հատուկ/ խմբերին տրամադրվող անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղորայքի հատկացման աշխատանքները.
15. Մարզպետին ներկայացնել երեխայի իրավունքների պաշտպանության Վարչության գործունեության մասին տարեկան հաշվետվությունը.

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն.

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ.

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ առողջապահության կամ սոցիալական բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ.

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Աշխատակազմի կառավարում

2. Քաղաքականության վերլուծություն, մոնիտորինգ
3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում
6. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Ժամանակի կառավարում
3. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
4. Փաստաթղթերի նախապատրատում
5. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում

4. Կազմակերպական շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի գերատեսչական մակարդակում աշխատանքների կազմակերպման և քաղաքականության իրականացման ապահովման և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց վրա ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի, այլ պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ իր իրավասությունների շրջանակներում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային ստորաբաժանման գործառույթներից բխող խնդիրները և

դրանց տալիս լուծումներ կամ մասնակցում է այդ խնդիրների լուծմանը: